

Պատրաստվե՛ք քվեարկել Օնտարիոյի նահանգային ընտրություններին:

Նշեք X մինչև հունիսի 2-ը՝ ներառյալ:

Իրավասություն

Օնտարիոյի նահանգային ընտրություններին մասնակցելու համար, անհրաժեշտ է՝

- ընտրությունների օրը լինել 18 կամ ավել տարեկան,
- լինել Կանադայի քաղաքացի, և
- լինել Օնտարիո նահանգի բնակիչ:

Գրանցում

Հաստատել, թարմացնել և ավելացնել Ձեր տվյալները ընտրացուցակում՝ մինչև մայիսի 23-ը հետևյալ կայքում՝ eregistration.elections.on.ca:

Սակայն, եթե գրանցված չեք, միևնույն է կարող եք քվեարկել: Երբ գնաք քվեարկության, Ձեր տվյալները կարող եք անձամբ ավելացնել:

Քվեաթերթիկ

Եթե Ձեր անունը նշված է ընտրացուցակում, Ձեզ կուղարկեն տեղեկատու ընտրաթերթիկ, որը կսահմանի, թե երբ և որտեղ պետք է քվեարկեք: Տեղեկատու քվեաթերթիկները կսկսեն ուղարկվել սկսած մայիսի 13-ից:

Voter Information Card
Carte d'information de l'électeur

Vote on Election Day — June 2, 2022, 9 AM to 9 PM (ET)
Vote on Election Day (FR) — 2 juin 2022, de 9 h à 21 h (HE)

Your voting location | Votre lieu de vote
 *1234 NORTH WALSHINGHAM - SOUTH WALSHINGHAM TOWNLINE RD
 TORONTO ON M4P 0C6

Your electoral district | Votre circonscription électorale
 LEEDS—GRENVILLE—THOUSAND ISLANDS AND RIDEAU LAKES | LEEDS—GRENVILLE—THOUSAND ISLANDS ET RIDEAU LAKES

Your registered address | Votre adresse inscrite
 1234 NORTH WALSHINGHAM - SOUTH WALSHINGHAM TOWNLINE RD
 TORONTO ON M4P 0C5

Poll | Bureau de vote
 #####

*Contact us about the accessibility of this location.
 *Veuillez nous contacter pour toute question concernant l'accessibilité de ce lieu de vote.

Return address:
 1234 NORTH WALSHINGHAM - SOUTH WALSHINGHAM TOWNLINE RD
 CITY ON E0E 0E0

CANADA POST
POST CANADA
 Parçage postal Parçage
 Lettresmail Pistolet-lettres

859-3956-20011-559312

JONATHAN SAMPLE
 1234 NORTH WALSHINGHAM - SOUTH WALSHINGHAM TOWNLINE RD
 TORONTO ON M4P 0C5

Դուք իրավասու եք քվեարկել, նույնիսկ եթե չեք ստացել տեղեկատու քվեաթերթիկը: Բերեք Ձեր անունը և ներկայիս բնակության հասցեն պարունակող անձը հաստատող մեկ փաստաթուղթ:

Ձեր ընտրատարածքի ընտրական ամսաթվերի և ընտրատեղամասերի հասցեների ամբողջական ցանկի համար տես՝ elections.on.ca կամ ներբեռնի՛ր Elections Ontario հավելվածը:

Քվեարկության համար անձը հաստատող փաստաթուղթ

Արդյոք ունե՞ք տեղեկատու քվեաթերթիկ:

- Այո՝ — բերե՛ք Ձեր անունը պարունակող անձը հաստատող մեկ փաստաթուղթ
- Ո՛չ — բերե՛ք Ձեր անունը և բնակության հասցեն պարունակող անձը հաստատող մեկ փաստաթուղթ:

Երբ գնում եք քվեարկելու, կարող եք ներկայացնել Ձեր անձը հաստատող փաստաթղթի պատճենը, որը կարող եք կամ տպել, կամ ցուցադրել հեռախոսի մեջ:

Պարտադիր չէ ներկայացնել անձը հաստատող լուսանկարով փաստաթուղթ: Քվեարկության գնալիս, պարտավոր չեք տեղեկություններ տրամադրել Ձեր սեռի կամ սեռական դրսևորման վերաբերյալ:

Անձը հաստատող փաստաթղթերի ընդունելի օրինակներ՝

- Օնտարիո նահանգի վարորդական իրավունք
- Օնտարիո նահանգի լուսանկարով քարտ
- Վարկային քարտի քաղվածք

- Կոմունալ ծառայության հաշիվ
- Բնակավարձի պայմանագիր
- Ակադեմիական քաղվածք

Կարող եք անձամբ հետևյալ կայքում պարզել՝ elections.on.ca/id-requirements, թե որոնք են քվեարկելու համար ընդունելի անձը հաստատող փաստաթղթերը:

Եկե՛ք համագործակցենք

Դիմեք ընտրությունների համար աշխատանքի

Եթե 16 կամ ավել տարեկան եք, կարող եք դիմել ընտրություններում ընտրական ծառայողի աշխատանքի համար՝ նախընտրական քվեարկության կամ ընտրությունների օրն աշխատելու համար: Աշխատելով ընտրությունների համար, բոլորի համար ընտրություններն ավելի դյուրին եք դարձնում:

Բոլոր պաշտոնների համար նախատեսված է աշխատավարձ, և անձնակազմի անվտանգությունն ապահովող լրացուցիչ անվտանգության միջոցներ են ապահովված:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ jobs.elections.on.ca.

Elections Ontario հավելված

Ստացեք ընտրությունների մասին անհատական տեղեկատվություն մեր նոր հեռախոսային հավելվածի միջոցով:



Ներբեռնե՛ք Elections Ontario հավելվածը և ստեղծե՛ք օգտագիրոջ հաշիվ, որպեսզի ստանաք՝

- Տեղեկատու ընտրաթերթիկի սկան արվող տարբերակը:
- Ընտրատեղերի և ընտրությունների ամսաթվերի ամբողջական ցանկը
- Ընտրությունների մասին անհատական ծանուցումներ
- Ձեր ընտրատեղամասի թեկնածուների ամբողջական ցանկը:

Քվեարկե՛ք նախապես

- Փոստով`
 - Դիմե՛ք փոստով քվեարկելու համար հետևյալ կայքում՝ votebymail.elections.on.ca կամ ներբեռնե՛ք և տպե՛ք դիմումնաձևը-հետևյալ կայքում elections.on.ca
 - Elections Ontario-ն պետք է ստանա ձեր դիմումը մայիս 27-ին, մինչև ժամը 18:00-ը(արևելյան ժամանակով):
 - Elections Ontario-ն պետք է ստանա Ձեր լրացված քվեարկության փաթեթը մինչև հունիսի 2-ը ժամը 18:00-ը (արևելյան ժամանակով):
 - Փոստով քվեարկելու դեպքում, անձը հաստատող փաստաթղթի այլ պահանջներ են ներկայացվում: Լրացուցիչ տեղեկությունների համար, տե՛ս՝ elections.on.ca/id-requirements բաժինը:
- Ձեր ընտրատեղամասում`
 - Ձեր ընտրատեղամասը Ձեր ընտրատարածքի տեղական գրասենյակն է:
 - Անձամբ քվեարկե՛ք Ձեր ընտրատեղամասում մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը` ժամը 18:00-ը (արևելյան ժամանակով):
 - Գտե՛ք Ձեր ընտրատեղամասը Ձեր տեղեկատու ընտրաթերթիկի վրա կամ հետևյալ կանքում՝ voterinformationsservice.elections.on.ca:
- Նախնական քվեարկության ժամանակ`
 - Քվեարկե՛ք Ձեր ընտրատարածքի ցանկացած նախնական քվեարկության ընտրատեղամասում 10:00 -ից մինչև 20:00-ը(արևելյան ժամանակով) մայիսի 19-ից 28-ն ընկած ժամանակահատվածում:
 - Գտե՛ք ընտրատեղամասերի ամբողջական ցանկը և քվեարկության ամսաթվերը հետևյալ կայքում՝ voterinformationsservice.elections.on.ca:

Քվեարկություն ընտրությունների օրը

- Քվեարկե՛ք Ձեզ հատկացված ընտրատեղամասում հունիսի 2-ին ժամը 9:00 -ից to 21:00-ը (արևելյան ժամանակով):
- Գտե՛ք Ձեզ հատկացված ընտրատեղամասը Ձեր տեղեկատու քվեաթերթիկի վրա, Elections Ontario հավելվածի վրա կամ հետևյալ կայքում՝ voterinformationsservice.elections.on.ca:

Հասանելիություն

Տե՛ս ստորև հասանելիություն ապահովող որոշ գործիքները, կամ Ձեզ հասանելի ծառայությունները:

Ձեր ընտրատեղամասում`

- Կիրառե՛ք քվեարկության օժանդակ համակարգը մայիսի 21-ից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կամ ընտրությունների օրը՝ նախապես գրանցվելով հանդիպման միջոցով:
- Չանգահարե՛ք Ձեր ընտրատեղամաս և խնդրե՛ք տնային այց կամ ընտրատեղամասի դիմաց փողոցում ավտոմեքենայից քվեարկելու հնարավորություն ընձեռել:
- Ընտրության օրվանից առաջ խնդրե՛ք, որ Ձեզ ապահովեն Ձեր կարիքներին համապատասխան փոխադրում ընտրատեղամաս:

Ձեր ընտրատեղամասում

- Պատվիրե՛ք Ամերիկյան ժեստերի լեզվի թարգմանիչ կամ օգնական, և մենք կհոգանք ծախսերը:
- Կիրառե՛ք Ձեր հեռախոսը որպես հասանելիության գործիք
- Խնդրե՛ք խոշորացույց կամ Բրեյլի քվեաթերթիկի ձևանմուշ
- Հրավիրե՛ք ընկեր, օգնական կամ բերեք ծառայողական կենդանի՝ օժանդակության համար:
- Ստացե՛ք քվեարկության հրահանգները և տեղեկատվություն ավելի քան 30 լեզվով հետևյալ կայքում՝ languages.at.elections.on.ca:

Հնարավորության դեպքում, բոլոր ընտրատեղամասերը պետք է համապատասխանեն Elections Ontario-ի ընտրատեղամասի հասանելիության չափանիշներին:

Ըստ պահանջի, ընտրությունների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է ներյացվել այլընտրանքային ձևաչափով:

Ձեր ընտրատեղամասերի հասանելիության, ինչպես նաև այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս՝ elections.on.ca/accessible-voting բաժինը:

COVID-19

Մենք համագործակցում ենք Առողջապահության գծով գլխավոր Բժշկական Ծառայողի գրասենյակի հետ, որպեսզի քվեարկությունն անվտանգ լինի քվեարկողների և մեր անձնակազմի համար: Բացի COVID-19 կանխարգելմանն ուղղված նահանգային միջոցառումներից, հանրային առողջապահական բաժինները և քաղաքապետարանները կարող են իրենց տարածաշրջանում սահմանել COVID-19 կանխարգելմանն ուղղված այլ առողջապահական միջոցառումներ:

Երբ գնում եք քվեարկելու, կտեսնեք, որ ներդրվել են տվյալ պահին գործող լավագույն փորձի համապատասխան միջոցառումներ, մասնավորապես դրանք կարող են ներառել դիմակի կրում, \$իզիկական հեռավորության պահպանում, ձեռքերի ախտահանում, պլաստմասե բաժանարար պատնեշների առկայություն:

Կապ

- Կայք՝ elections.on.ca
- Հեռախոսահամար՝ 1.888.668.8683
- TTY: 1.888.292.2312
- Էլ. ասուցի՝ info@elections.on.ca
- Twitter: @ElectionsON
- Facebook: ElectionsON
- Instagram: @electionson